ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՇՄՆ-ԴՇ-24/03

ք.Երևան «18» «01» 2024թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար **Ս.Աթանեսյանի** (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը**, ի դեմս տնօրեն **Կ.Մնացականյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), **«Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարում»** ծրագրային միջոցառման՝ բաժին 05, խումբ 04, դաս 01, ծրագիր 1155, միջոցառում 11004 (այսուհետ՝ Ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ մինչև **431 979 400 (չորս հարյուր երեսունմեկ միլիոն ինը հարյուր յոթանասունինը հազար չորս հարյուր)** ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով: Պայմանագրի գինը ներառում է ԱԱՀ-ի գումարը:

1.2. Ծրագրով նախատեսված Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են Պայմանագրի Հավելված №1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա) Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ) Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ) իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորիգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվառումը հաշվապահական հաշվառման վարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Պետական մարմնին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին աճողական հաշվետվություններ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-ը, իսկ 4-րդ եռամսյակինը՝ մինչև դեկտեմբերի 15-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ 20-օրյա ժամկետում ամփոփ հաշվետվություն.

2.4.5. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը, Պայմանագրի արդյունքների հանձնման և ընդունման կարգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.6. Պայմանագրի արդյունքն ընդունվում է Պետական մարմնի և Կազմակերպության միջև երկկողմ ստորագրված և հաստատված փաստաթղթով՝ հանձնման-ընդունման արձանագրությամբ (Հավելված №3), նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Պայմանագրի 2.4.4 կետով նախատեսված ժամկետում Կազմակերպությունը իրականացված միջոցառումների հաշվետվության հետ Պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

3.7. Հանձնման-ընդունման արձանագրությունը Պետական մարմնի կողմից ստորագրվում է, եթե Պայմանագրի արդյունքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և հաստատվում: Նման դեպքում Պետական մարմինը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կազմակերպության նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.8. Պետական մարմինը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կազմակերպությանն է ներկայացնում իր կողմից ստորագրված և հաստատված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Պայմանագրի արդյունքները չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.9. Եթե Պայմանագրի 3.8 կետով սահմանված ժամկետում Պետական մարմինը չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա Պայմանագրի արդյունքը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.8 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պետական մարմինը Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված և հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.10. Իրականացված միջոցառումների մասին մոնիթորինգի ժամանակ կիրառվում են հետևյալ պայմանները (կիրառելի է միայն Հավելված №1-ի 4-րդ կետի համար)՝

1) Կազմակերպության իրականացված միջոցառումների մոնիթորինգը կարող է իրականացվել Պետական մարմնի ղեկավարի կողմից ձևավորված աշխատանքային խմբի (այսուհետ՝ աշխատանքային խումբ) կողմից.

2) աշխատանքային խումբը փաստագրում է իրականացված միջոցառումները և կազմում մոնիթորինգի հաշվետվություն.

3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված մոնիթորինգի հաշվետվության հիման վրա, եթե իրականացված միջոցառումները համապատասխանում են պայմանագրի պայմաններին, ապա Պետական մարմինն իրականացնում է վճարումը Պայմանագրի 4.2 կետով նախատեսված կարգով:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Պայմանագրի Հավելված №2-ով հաստատված, տվյալ եռամսակին բաժին ընկնող գումարը յուրաքանչյուր ամսվա առաջին 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում, հավասար մասնաբաժիններով Պետական մարմինը փոխանցում է Կազմակերպության բանկային հաշվին՝ որպես տվյալ եռամսյակի կանխավճար:

4.2. Եթե Կազմակերպությունը տվյալ եռամսյակի համար նախատեսված միջոցառումները՝

ա) իրականացրել է ամբողջությամբ և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.

բ) ամբողջությամբ չի իրականացրել, ապա կիրառվում է Պայմանագրի 2.1.2 և (կամ) 2.4.6 կետերով սահամանված պայմանները և իրականացված միջոցառումների արժեքի չափով Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը

մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, իսկ հաջորդ կանխավճարը վճարվում է չիրականացված միջոցառման չափով պակաս և Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.

գ) իրականացրել է նախատեսվածից ավելի և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով, իսկ ավել իրականացված միջոցառման չափով վճարումն իրականացվում է մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը, սակայն ոչ ավելի Պայմանագրի 1.1 կետով սահմանված գումարից:

4.3. Պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո՝ Կազմակերպությունը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման և Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է ստացված ֆինանսական աջակցության գումարները չիրականացված միջոցառման չափով վերադարձնել Պետական մարմնին և վճարել տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագրով նախատեսված միջոցառումները սահմանված ժամկետում իրականացնելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու դեպքում:

5.3. Պայմանագրով նախատեսված իրականացման ենթակա միջոցառումների ժամկետը խախտելու, ինչպես նաև Պայմանագրի 2.4.4 կետով նախատեսված հաշվետվությունները սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում յուրաքանչյուր ուշացված օրվա համար Կազմակերպությունից գանձվում է տույժ՝ իրականացման ենթակա, սակայն չիրականացված միջոցառման գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4. Պետական մարմինը Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարման ենթակա գումարներից:

5.5. Պետական մարմնի կողմից Պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պետական մարմնի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագրի պայմանները տարածվում են 2024 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով հաստատված արդյունքային (կատարողական) ցուցանիշների եռամսյակային (աճողական) համամասնությունները (Հավելված №2) հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Եթե տրամադրվող դրամաշնորհով նախատեսված ծրագիրը և միջոցառումները ենթակա չեն ավելացված արժեքի հարկով հարկման կամ ենթակա են հարկման պետական բյուջեից ավելացված հարկի վճարման համար տրամադրվող գումարի դիմաց ավելի փոքր գումարի չափով, ապա նշված հարկի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարները 2024 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

8.4. Կազմակերպությունը մինչև 2024 թվականի հունվարի 31-ը Պետական մարմնին են ներկայացնում տեղեկատվություն 2024 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին ստացված դրամաշնորհի շրջանակներում հաշվարկված և պետական բյուջե վճարված ԱԱՀ գումարների, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջե մասին» օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ մասի պահանջներին համապատասխան չօգտագործված և ՀՀ պետական բյուջե վերադարձված գումարների վերաբերյալ:

8.5. Պայմանագիրը կազմված է 4 (չորս) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ: Պայմանագրի Հավելվածներ №№1-ը, 2-ը և 3-ը համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.6. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ**
ք.Երևան, Կառավարական տուն 3	ք.Սևան, Կարմիր Բանակի 56
ՖՆ գործառնական վարչություն	ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011007789	ՀՀ 900018002890
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 08602899
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար	«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն
Ս.Աթանեսյան	**Կ.Մնացականյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված №1
«18» «01» 2024թ. կնքված
№ ՇՄՆ-ԴՇ-24/03 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Ջրային միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
Ս.Աթանեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի
տնօրեն
Կ.Մնացականյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1	«Սևան» ազգային պարկի պահպանություն	Ազգային պարկի տարածքում պահպանության ընդհանուր միջոցառումների իրականացում:	Պահպանության ծառայություններ աշխատակիցների կողմից պարկի տարածքի արգելոցների և արգելավայրերի տարածքներում ստուգումների և շուրջօրյա հերթապահությունների միջոցով:	Պատշաճ պահպանություն: Ապօրինի ձկնորսության և խեցգետնի ապօրինի որսի, ապօրինի շինարարության, ռելիեֆի խախտման, ապօրինի ծառահատման, ապօրինի աղբաթափման, ապօրինի արածեցման և այլ իրավախախտումների բացառում:	31.12.2024թ.	273 705 700
		Ազգային պարկի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնական տեսակների գենոֆոնդի, բնության ժառանգության, պահպանություն, պաշտպանություն ազգային պարկի ամբողջ տարածքում:	Արդյունագործական ձկնորսության սպասարկման մուտքի և ելքի կետերի աշխատանքի կազմակերպում: Պահաբաժիններում գարնանային և աշնանային հերթական և վերստուգիչ ստուգումների իրականացում:	Արդյունագործական ձկնորսության սպասարկման մուտքի և ելքի կետերի ընդհանուր թիվը՝ 25: Պահաբաժիններում չարձանագրված ապօրինի ծառահատումների բացահայտում		
		Պահաբաժիններում գարնանային և աշնանային հերթական և վերստուգիչ ստուգումներ:	«Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից համայնքների բնակչության շրջանում բացատրական աշխատանքների իրականացում:	Հանրության իրազեկում «Սևան» ազգային պարկի հարակից 41 համայնքներում:		
		Հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացում:	Հակահրդեհային ճանապարհների ընթացիկ նորոգում:	Հրդեհների կանխարգելում:		
		Հանրային լողափերի կազմակերպում:	Ազգային պարկի տարածքում գտնվող հանրային լողափերի սպասարկում և պահպանում:	Կահավորված հանրային լողափերի քանակը՝ 5, այցելուների թիվը՝ 150000: Չկահավորված 2 հանրային լողափերի բարեկարգում և կահավորում:		

2	Պարկի տարածքում գիտական հետազոտություններ	Աշխատանքային պլաններով նախատեսված գիտական հետազոտությունների իրականացում, հարող բնակավայրերի բնակչության շրջաններում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիարակություն	• Գիտության և մոնիթորինգի բաժնի աշխատակիցների կողմից աշխատանքային պլաններով նախատեսված գիտական հետազոտությունների իրականացում. • Մեծ Սևանում, Փոքր Սևանում, Սևանա լիճ թափվող Դրախտիկ, Ձկնագետ, Գավառագետ, Ծակքար, Մասրիկ, Արգիճի, Լիճք, Վարդենիկ, Մարտունի գետերի ջրերի որակի ուսումնասիրություն, մանրէաբանական, հիդրոքիմիական և հիդրոֆիզիկական հետազոտությունների իրականացում, • Ձկան և խեցգետնի պոպուլյացիաների ուսումնասիրություն Մեծ Սևանում և Փոքր Սևանում, • «Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից համայնքների բնակչության շրջանում բացատրական աշխատանքների իրականացում, Այցելուների կենտրոնի և տարածքի այցելուներին տեղեկատվության տրամադրում, • էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների գույքագրում, հաշվառում և մոնիթորինգ, • Նախարարության կայքում հրապարակված գիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների վերաբերյալ հաշվետվություններ	• Սևանա լիճ թափվող գետերի և Սևանա լճի ջրի որակի վերաբերյալ արդյունքների վերլուծություն, • Ձկների կենսաբանական ցուցանիշների, դրանց տարածական տեղաբաշխման և կենսապայմանների, խեցգետնի վերարտադրման առանձնահատկությունների, պոպուլյացիաների չափատարիքային և սեռական կառուցվածքի, բազմացման ժամանակաշրջանների, բեղունության ցուցանիշների վերլուծություն, • Գիտական ուսումնասիրությունների և մոնիթորինգի իրականացման ընթացքում ստացված տվյալների հավաքագրում, դասակարգում, տարածքների և բնական պաշարների օգտագործման հաշվառում, ամփոփում և վերլուծություն • յուրաքանչյուր եռամսյակ մեկ հաշվետվություն, հաշվետվությունների ընդհանուր թիվը՝ 4: • «Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից 41 համայնքների բնակիչների էկոլոգիական իրազեկվածության մակարդակի բարձրացում, 12 միջոցառում, մասնակիցների թիվը 1500	31.12.2024թ.	21 042 000
		Ազգային պարկի թանգարանի աշխատանքների կազմակերպում և իրականացում	• Թանգարանային ցուցանմուշների պահպանություն, խնամք և ցուցադրում	• Բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների պատշաճ ցուցադրում		
3	Պարկի տարածքում անտառտնտեսական աշխատանքներ	• Անտառագիտական և անտառտնտեսական միջոցառումներ՝ անտառվերականգնողական և անտառտնկման աշխատանքներ. • խախտված էկոհամակարգերի վերականգնմանն ուղղված միջոցառումներ	Մասնաճյուղերի կողմից անհրաժեշտությամբ պայմանավորված անտառագիտական և անտառտնտեսական միջոցառումներ, սանիտարական հատումներ և խնամքի աշխատանքներ, գեղարքունի մանրածկան աճեցում (2 միջոցառում):	• տնկարկների խնամք և անտառվերականգնողական աշխատանքներ՝ 5 հա անտառտնկում, տնկարանային տնտեսությունում աճեցված տնկիների թիվը 10000, • գեղարքունի մանրածկան աճեցում և բացթողում	31.12.2024թ.	9 150 000

4	Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրում	Սևանա լճի ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում թփերի, մացառների, ծառերի և կոճղերի արմատախիլ անում, անտառանյութի մասնատում և տեղափոխում	• Ջրի մեջ և ճահճացած տարածքում թփերի, մացառների, ծառերի և կոճղերի արմատախիլ անում, • ծառերի, արմատային զանգվածի հետափ հանում մեքենա-մեխանիզմների ձգաճոպանով կամ հետ քարշակում տրակտորով միջինը 200-300 մետր հեռավորության վրա՝ մեքենայի բարձման տեղ, • թփերի, մացառների, կոճղերի և արմատային զանգվածի բարձում լաստի վրա, տեղափոխում ափ և դատարկում, • էքսկավատորով կոճղերի, ջախի, թփերի և արմատային զանգվածի բարձում բեռնատար մեքենային, • անտառանյութի մասնատում, • փայտանյութի, ջախի և արմատային զանգվածի տեղափոխում 5 կմ հեռավորության վրա: • աշխատանքների իրականացումը ըստ կցված քարտեզ-սխեմաների, • խոտածածկ տարածքները մաքրման ենթակա գործառույթ չեն համարվում:	Բնական ռեսուրսների արդյունավետ կառավարման պայմանների ապահովում, բույսերի և կենդանիների պահպանություն և վերարտադրության աճի ապահովում: Մեքենա-սարքավորումների միջոցով Սևանա լճի ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների պատշաճ մաքրման աշխատանքների իրականացում, մաքրման ենթակա տարածքները 191.6 հա	31.12.2024թ.	128 081 700
ԸՆԴԱՄԵՆԸ						**431 979 400**


Քարտեզ - սխեմա
«Սևան» ազգային պարկի
«Նորատուսի» մասնաճյուղի «Այրիվանի»
տեղամասում նախատեսված
մաքրման աշխատանքների
ընդհանուր մակերես՝ 92.23 հա
Մասշտաբ՝ 1:20,000
Սևանա լիճ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Ճահճապատ՝ 27.18հա
Ջրածածկ՝ 5.76հա
Ծառաթփային բուսականություն՝ 8.43հա
Խոտածածկ՝ 47.56հա
Ավազե /քարքարոտ ափ՝ 3.3հա
Զանգվածի կուտակման տեղադիրք
1901,5մ բարձրության նիշ
Ազգային պարկի քառակուսիների սահմաններ
Կոորդինատային համակարգը՝
WGS_1984_UTM_Zone_38N
511000
4476000
4474000


Քարտեզ - սխեմա
«Սևան» ազգային պարկի
«Վարդենիսի» մասնաճյուղի «Արեգունի»
տեղամասում նախատեսված
մաքրման աշխատանքների
ընդհանուր մակերես՝ 37.53 հա
Մասշտաբ՝ 1:23000
Սևանա լիճ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Ճահճապատ՝ 17.89հա
Ջրածածկ՝ 1.46հա
Ծառաթփային բուսականություն՝ 7.41հա
Խոտածածկ՝ 4.17հա
Ավազե /քարքարոտ ափ՝ 6.6հա
Զանգվածի կուտակման տեղադիրք
1901,5մ բարձրության նիշ
Ազգային պարկի քառակուսիների սահմաններ
Կոորդինատային համակարգը՝
WGS_1984_UTM_Zone_38N
22
23
24
25
26
29
31
33
34
35
36
37
38
39
4468000
4466200
4464400
546000
548000
550000


Քարտեզ - սխեմա 1.
«Սևան» ազգային պարկի
«Արտանիշի» մասնաճյուղի «Արտանիշ»
տեղամասում նախատեսված
մաքրման աշխատանքների
ընդհանուր մակերես ՝ 1.85 հա
Մասշտաբ ՝ 1:6000
17
12
25
Սևանա լիճ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Ճահճապատ՝ 0.93հա
Ջրածածկ ՝ 0.46հա
Ծառաթփային բուսականություն ՝ 0.06հա
Ավազե /քարքարոտ ափ ՝ 0.4հա
Չանգվածի կուտակման տեղադիրք
1901,5մ բարձրության նիշ
Ազգային պարկի քառակուսիների սահմաններ
Կոորդինատային համակարգը՝
WGS_1984_UTM_Zone_38N
4479500
4478800
525300
526000
526700


Քարտեզ - սխեմա 2.
«Սևան» ազգային պարկի
«Արտանիշի» մասնաճյուղի «Արտանիշ»
տեղամասում նախատեսված
մաքրման աշխատանքների
ընդհանուր մակերես՝ 16.24 հա
Մասշտաբ՝ 1:15000
22
23
24
27
41
28
16
15
41
20
29
20
14
Սևանա լիճ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Ճահճապատ՝ 5,78հա
Ջրածածկ՝ 1,88հա
Ծառաթփային բուսականություն՝ 4,1հա
Խոտածածկ՝ 0,2հա
Ավազե /քարքարոտ ափ՝ 4,28հա
Զանգվածի կուտակման տեղադիրք
1901,5մ բարձրության նիշ
Ազգային պարկի քառակուսիների սահմաններ
4482000
4480000
530000
532000
Կոորդինատային համակարգը՝
WGS_1984_UTM_Zone_38N


Քարտեզ - սխեմա 3.
«Սևան» ազգային պարկի
«Արտանիշի» մասնաճյուղի «Արտանիշ»
տեղամասում նախատեսված
մաքրման աշխատանքների
ընդհանուր մակերես՝ 12.39 հա
Մասշտաբ՝ 1:24000
41
41
29
30
Սևանա լիճ
32
33
36
37
31
34
38
4480000
4478000
4476000
534000
536000
538000
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Ճահճապատ՝ 7.55հա
Ջրածածկ՝ 0.76հա
Ծառաթփային բուսականություն՝ 0.42հա
Խոտածածկ՝ 1.21հա
Ավազե /քարքարոտ ափ՝ 2.45հա
Զանգվածի կուտակման տեղադիրք
1901,5մ բարձրության նիշ
Ազգային պարկի քառակուսիների սահմաններ


Քարտեզ - սխեմա 1,
«Սևան» ազգային պարկի
«Արտանիշի» մասնաճյուղի «Դրախտիկ»
տեղամասում նախատեսված
մաքրման աշխատանքների
ընդհանուր մակերես՝ 12.92 հա
Մասշտաբ՝ 1:22000
1
2
3
4
5
Սևանա լիճ
4489950
4487900
4485850
517500
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Ճահճապատ՝ 5.96հա
Ջրածածկ՝ 0.72 հա
Ծառաթփային բուսականություն՝ 2.02 հա
Խոտածածկ՝ 0.60հա
Ավազե /քարքարոտ ափ՝ 3.62հա
Զանգվածի կուտակման տեղադիրք
1901,5մ բարձրության նիշ
Ազգային պարկի քառակուսիների սահմաններ
Կոորդինատային համակարգը՝
WGS_1984_UTM_Zone_38N


Քարտեզ - սխեմա 2.
«Սևան» ազգային պարկի
«Արտանիշի» մասնաճյուղի «Դրախտիկ»
տեղամասում նախատեսված
մաքրման աշխատանքների
ընդհանուր մակերես՝ 0.88 հա
Մասշտաբ՝ 1:10000
5
6
7
4485850
Սևանա լիճ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Ջրածածկ՝ 0.35 հա
Ծառաթփային բուսականություն՝ 0.31 հա
Ավազե /քարքարոտ ափ՝ 0.22հա
Ձանգվածի կուտակման տեղադիրք
1901,5մ բարձրության նիշ
Ազգային պարկի քառակուսիների սահմաններ
520000
Կոորդինատային համակարգը՝
WGS_1984_UTM_Zone_38N


Քարտեզ - սխեմա 3.
«Սևան» ազգային պարկի
«Արտանիշի» մասնաճյուղի «Դրախտիկ»
տեղամասում նախատեսված
մաքրման աշխատանքների
ընդհանուր մակերես՝ 30.4 հա
Մասշտաբ՝ 1:22000
7
8
9
10
11
Սևանա լիճ
Սևանա լիճ
4483800
4481750
4479700
522500
525000
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Ճահճապատ՝ 5.64հա
Ջրածածկ՝ 0.48 հա
Ծառաթփային բուսականություն՝ 10.39 հա
Խոտածածկ՝ 2.42հա
Ավազե /քարքարոտ ափ՝ 11.47հա
Զանգվածի կուտակման տեղադիրք
1901,5մ բարձրության նիշ
Ազգային պարկի քառակուսիների սահմաններ
Կոորդինատային համակարգը՝
WGS_1984_UTM_Zone_38N


Քարտեզ - սխեմա
«Սևան» ազգային պարկի
«Մարտունի» մասնաճյուղի «Երանոս»
տեղամասում նախատեսված
մաքրման աշխատանքների
ընդհանուր մակերես ՝ 83.23 հա
Մասշտաբ ՝ 1:23000
Սևանա լիճ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Ճահճապատ՝ 45.27հա
Ջրածածկ ՝ 2.03հա
Ծառաթփային բուսականություն ՝ 22.11հա
Խոտածածկ ՝ 4.45հա
Ավազե /քարքարոտ ափ ՝ 3.12հա
Եղեգնածածկ տարածք ՝ 6.25հա
Զանգվածի կուտակման տեղադիրք
1901,5մ բարձրության նիշ
Ազգային պարկի քառակուսիների սահմաններ
Կոորդինատային համակարգը՝
WGS_1984_UTM_Zone_38N
4454000
4452000
4450000
518000
520000

Հավելված №2
«18» «01» 2024թ. կնքված
№ ՇՄՆ-ԴՇ-24/03 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
Ս.Աթանեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի
տնօրեն
Կ.Մնացականյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՀՀ 2024 թվականի պետական բյուջեով հաստատված արդյունքային (կատարողական) ցուցանիշների եռամսյակային (աճողական) համամասնությունները

Ծրագրի դասիչը՝	**1155**	**Ցուցանիշներ**			
Միջոցառման դասիչը՝	**11004**	**Առաջին եռամսյակ***	**Առաջին կիսամյակ**	**Ինն ամիս***	**Տարի**
Միջոցառման անվանումը՝	«Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների կատարում				
Նկարագրությունը՝	«Սևան» ազգային պարկի տարածքում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների իրականացում				
Միջոցառման տեսակը՝	Ծառայությունների մատուցում				
Միջոցառումն իրականացնողի անվանումը՝	Մասնագիտացված կազմակերպություններ				
Արդյունքի չափորոշիչներ					
ՊՈԱԿ-ի տնօրինության՝ ԲՀՊ տարածքներում գտնվող բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանություն, հա			147343		147343
Գիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների վերաբերյալ հաշվետվությունների թիվը, հատ			2		4
Նախարարության կայքում հրապարակված գիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների վերաբերյալ հաշվետվությունների թիվը, հատ			2		4
Բնակչության էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումների թիվը, հատ			6		12
Էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումների մասնակիցների թիվը, շահառու			700		1500
Ազգային պարկի տարածքում գտնվող հանրային լողափերի սպասարկում և պահպանում, հանրային լողափերի քանակը, հատ			5		5
Ազգային պարկի տարածքում գտնվող հանրային լողափերի այցելուների թիվը, մարդ			30000		150000

Խախտված էկոհամակարգերի վերականգնմանն ուղղված միջոցառումների (անտառտնկում, գեղարքունի մանրածկան աճեցում և բացթողում) թիվը, հատ		1		2
Անտառապատման աշխատանքների իրականացում, հա		5		5
Տնկարանային տնտեսությունում աճեցված տնկիների թիվը, հատ		10000		10000
Սևանա լճում արդյունագործական ձկնորսության սպասարկման մուտքի և ելքի կետերի թիվը, հատ		25		25
Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրում, հա		86.22		191.6
Մաքրված տարածքների մասնաբաժինը մինչև 1901.5 մետր նիշը մաքրման ենթակա (01.01.2024թ. դրությամբ՝ 779.06 հա) տարածքներում, տոկոս		11.1		24.6
ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Սևան» ազգային պարկի տարեկան համալիր ծրագրով վերապահված միջոցառումների կատարման մակարդակը, տոկոս		100		100
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)	**72 140.5**	**194 390.7**	**302 385.6**	**431 979.4**

* Առաջին եռամսյակի և 9 ամիսների հաշվետվություններում արդյունքային չափորոշիչների համար «Հաշվետու ժամանակահատվածի պլանային (ճշտված) և փաստացի ցուցանիշների տարբերությունը» սյունակը չի լրացվում, իսկ «Տարբերության պատճառը» սյունակում ներկայացվում են միայն այն ցուցանիշների բացատրությունները, որոնց գծով հաշվետու ժամանակահատվածում առաջացել են ռիսկեր առաջիկա հաշվետու ժամանակահատվածի համար հաստատված արդյունքային ցուցանիշների չկատարման կամ մասամբ կատարման գծով: Հաշվետու ժամանակահատվածի համար լրացվում է «Փաստացի ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածում» սյունակը:

Հավելված №3
«18» «01» 2024թ. կնքված
№ ՇՄՆ-ԴՇ-24/03 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Շրջակա միջավայրի նախարարություն	«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ
ք.Երևան, Կառավարական տուն 3	ք.Սևան, Կարմիր Բանակի 56
ՖՆ գործառնական վարչություն	ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011007789	ՀՀ 900018002890
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 08602899

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2024թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր***

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «18» «01» 2024թ.

Պայմանագրի համարը՝ ՇՄՆ-ԴՇ-24/03

Պետական մարմինը՝ ի դեմս գլխավոր քարտուղար Ս.Աթանեսյանի և Կազմակերպությունը՝ ի դեմս «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն Կ.Մնացականյանի, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը «___» «_____» 2024 թվականից մինչև «___» «_____» 2024 թվականն ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ միջոցառումները.

№	Իրականացված միջոցառման						
	անվանումը	համառոտ բովանդակությունը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները		քանակական կամ արդյունքային ցուցանիշները		Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի	

ՀԱՆՁՆԵՑ	ԸՆԴՈՒՆԵՑ
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.